

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ЭТногр
А-80
38137

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

## ДУХОВНЫЕ ПЕСНИ

## SPIRITUAL SONGS



# ДУХОВНЫЕ ПЕСНИ
# SPIRITUAL SONGS

ВТОРОЕ ИЗДАНИЕ
SECOND EDITION

ЕРЕВАН, "АНАИТ" 2011 YEREVAN, "ANAHIT"

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

38137

ԵՐԵՒԱՆ, «ԱՆԱՅԻՏ», 2011

ԵՐՊԵՏԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ЕРГОСКОНСЕРВАТОРИЙ

Հրատարակված է
պետական պատվերով

ՀՏԴ 23/28+78(479.25)
ԳՄԴ 86.37:85,31(2Հ)
Հ 241

Կազմեց եւ խմբագրեց
**Աննա Արեւշատեանը**

Составление и редакция
**Анна Аревшатян**

Compilation and Edited by
**Anna Arevshatyan**

Հ 241 «Հոգևոր երգեր» /կազմ.՝ Ա. Արևշատյան. – Եր.: «ԱՆԱՀԻՏ», 2011. – 216 էջ:

ՀՏԴ 23/28+78(479.25)
ԳՄԴ 86.37:85,31(2Հ)

**ISBN 978–99930–63–33–9**

© «Անահիտ» հրատարակչութիւն, 2011 թ.
© Издательство "АНАИТ", 2011 г.
© «ANAHIT» publishers, 2011

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայ հոգեւոր երգարուեստը, որը արեւելաքրիստոնէական աշխարհի հնագոյն երաժշտական մշակոյթներից է, սկսել է ձեւաւորուել դեռեւս IV-V դարերում: Լինելով բացառապէս միաձայն /մոնոդիկ/ մշակոյթ եւ կազմաւորուելով Արեւելքի եւ Արեւմուտքի բազմահարուստ երաժշտական աւանդոյթների խաչմերուկում, այն դարերի ընթացքում ձեռք է բերել ինքնատիպ գծեր, որոնք պայմանաւորուած են եկեղեցական ձայնեղանակների ուրոյն համակարգով, ժողովրական եւ գուսանական արուեստի հետ ունեցած ընդհանուր ակունքներով:

Շարականերգութիւնը հայ հոգեւոր երգարուեստի առաւել ծաւալուն եւ համեմատաբար լաւ պահպանուած հատուածն է: Զարգանալով մի ամբողջ հազարամեակի /V-XV դդ./ ընթացքում, այն մշտապէս եղել է ազգային մշակոյթի խոշորագոյն դեմքերի ուշադրութեան կենտրոնում եւ հարստացել նրանց ստեղծագործութիւններով: Շարականի՝ իբրեւ հայ հոգեւոր երգարուեստի առաւել ընդհանրացած տեսակի բազմադարեայ զարգացումն ունեցել է մի քանի հանգրուաններ: Դրանցից սկզբնականը քրիստոնէութեան ընդունումից եւ գրերի գիւտից յետոյ առաջին ինքնուրոյն հոգեւոր երգերի՝ կցուրդների ստեղծման շրջանն է: Պատմական աւանդոյթն այն կապում է Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի, Մովսէս Խորենացու եւ Յովհան Մանդակունու անունների հետ: Այդ շրջանում է, որ կազմաւորւում են հայ շարականերգութեանը յատուկ կերպարային արտայայտչականութեան հիմնական ոլորտները, աստուածաշնչային նիւթի բանաստեղծական մշակման հնարները, հայ եկեղեցական երգեցողութեան հիմնական տիպերը՝ յորդոր, չափաւոր-միջակ եւ ծանր երգերը, որոնց մէջ շարժումը /տեմպը/ պայմանաւորւում է նաեւ գրական խօսքի հնչինաւորման կերպը: Երգեցողութեան այդ տիպերի մշակումը կապուած է նաեւ պաշտոներգութեան մէջ նրանց գրաւած տեղով, այսինքն՝ ծիսական կիրառութեամբ: Ամենօրեայ ժամերգութեան համար նախատեսուած երգասացութիւնները, բնականաբար, ունեն պարզ եւ գնայուն նկարագիր եւ կատարւում են դպիրների դասերի

կողմից՝ խմբակային: Կիրակի օրերին եւ եկեղեցական խոշոր տօների ժամանակ կատարուող երգասացութիւնները օրուայ հանդիսաւորութիւնն ընդգծելու նպատակով ստանում են աւելի մեծ ծաւալ, ծորերգային-զարդոլորուն /կանտիլենային-մելիզմատիկ/ բնոյթ եւ հնչիւնաւորւում մենակատար հմուտ երգեցողների կողմից: Խստաշունչ ճգնաւորական, ապաշխարանքի, մարդու մեղսաւորութեան գաղափարը եւ վերջին դատաստանի սպասում արտայայտող շարականների կողքին քիչ չեն պատմողական եւ մեկնողական բովանդակութեան, ինչպես եւ լուսաւոր, բերկրալի, քնարական զգացումներ արտայայտող փառաբանական, օրհներգային բնոյթի երգերը:

Յաջորդը նոր երաժշտաբանաստեղծական տեսակների՝ կցուրդ-կոնդակի, կանոնի զարգացման շրջանն է /VII-VIII դդ./, որը յատկանշւում է Կոմիտաս Աղցեցու, Սահակ Ձորափորեցու, Անանիա Շիրակացու, Ստեփաննոս Սիւնեցու եւ այլոց մի շարք չափանմուշային կոթողներով: Իրենց վեհ տրամադրութեամբ, մեղեդային նկարագրի մաքրութեամբ եւ նրբակերտութեամբ աչքի ընկնող այդ օրհներգերը բնութագրւում են գեղարուեստական ընդհանրացման աւելի բարձր աստիճանով:

Հայ հոգեւոր երգարուեստը մեծ վերելք է ապրել X-XIV դարերում: Այդ շրջանում ստեղծուած նմուշներից շատերը՝ շարականներ, տաղեր, պատարագի սրբասացութիւններ կարելի է դասել արեւելաքրիստոնեական երգարուեստի նշանակալի երեւոյթների շարքը: X-XIV դդ. հոգեւոր մոնոդիան բնորոշւում է տաղային արուեստի տարբեր տեսակների /գանձ, տաղ, մեղեդի, յորդորակ/ ծաղկումով, որն իր հերթին ներազդել է նաեւ շարականի ժանրի վրայ: Առաջատար նշանակութիւն է ստացել այսպէս կոչուած մելիզմատիկ երգաոճը, որի ազդեցութեամբ ստեղծուած են տուեալ շրջանի լաւագոյն կոթողները: Միտում է նկատւում եկեղեցու կողմից կանոնակարգուած համապարտադիր ութ ձայնեղանակների կաշկանդող շրջանակները յաղթահարելու ուղղութեամբ: Անիի թագաւորութեան ժամանակաշրջանի եւ մշակութային մթնոլորտին կապված շարականագիրները՝ Ստեփաննոս Ապարանցին, Պետրոս Գետադարձը, Գրիգոր Մագիստրոսը, Յովհաննէս Սարկաւագը ի մի են բերում V-VIII դարերի շարականերգութեան լաւագոյն ձեռքբերումները, զգալի չափով նախապատրաստելով կիլիկեան հեղինակների ստեղծագործութեան մէջ իրագործուած հետագայ մեծ թռիչքը: Այդ ժամանակաշրջանին է պատկանում նաեւ հանճարեղ բանաստեղծ եւ երաժիշտ Գրիգոր Նարեկացու /X դ./ տաղային ստեղծագործութիւնը, որն իր մեղեդային վառ կերպարներով, յօրինուածքա-

յին նորարար հնարքներով, աշխարհընկալման եւ գեղարուեստական ճաշակի ռենեսանսային բնոյթով, բոլորովին նոր հորիզոններ բացեց հայ երաժշտական մշակոյթում թէ՛ ձեւի, եւ թէ՛ բովանդակութեան առումով:

Հայ միջնադարեան մշակոյթի գագաթներից է XII դ. Կիլիկիայում գործած մեծագոյն երաժիշտ եւ բանաստեղծ Ներսէս Շնորհալու ստեղծագործութիւնը, որի նշանակութիւնը, ինչպէս եւ Գրիգոր Նարեկացունը, դուրս է գալիս զուտ ազգային շրջանակներից, դառնալով ողջ քրիստոնէական աշխարհի հոգեւոր երաժշտութեան ինքնատիպ էջերից մեկը: Ներսէս Շնորհալու գործերը, որոնք աչքի են ընկնում մեղեդային ոճի անհատականացմամբ եւ աշխարհականացմամբ, բանաստեղծական խոր ապրումով եւ տաղաչափական վարպետութեամբ, հարստացրել եւ համալրել են բոլոր երաժշտածիսական մատեանները՝ Շարակնոցը, Ժամագիրքը, Գանձարանը, Մանրուսումը: Նրա տաղանդի եւ ջանքերի շնորհիւ Հայոց Պատարագն ստացաւ երաժշտական առումով անկրկնելի նկարագիր: Պատարագ, որի մասին կարելի է իրաւամբ ասել. ինչպէս Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնն է միջազգային գիտական աշխարհում ճանաչուել «թարգմանութիւնների թագուհի», այնպէս էլ՝ Հայոց Պատարագի երգեցողութիւններն են անգին գոհարի պէս փայլում քրիստոնէական եկեղեցիների պատարագների մէջ: Ձեւաւորուելով վաղ քրիստոնէական եկեղեցու նշանաւոր հայրերի ընդհանրացած պատարագների հիման վրայ, այն դարերի ընթացքում անընդհատ յղկուել, կատարելագործուել է, ի վերջոյ դառնալով հայ հոգեւոր երգարուեստի խտացումը: Պատահական չէ, որ հէնց Պատարագն է հանդիսացել այն հիմքը, որին դիմել են Մակար Եկմալեանն ու Կոմիտասը հայ երաժշտութեան մէջ բազմաձայնութիւնը ներմուծելիս:

Ներսէս Շնորհալու աւանդոյթները խոր ազդեցութիւն են թողել XII-XV դարերի շարականագիրների եւ տաղասացների ստեղծագործութեան վրայ, որոնցից հատկապէս նշելի են բուն Հայաստանում գործած Խաչատուր Տարօնեցին, Յովհաննէս Երզնկացին, Վարդան Արեւելցին, իսկ կիլիկեան հեղինակներից՝ Ներսէս Լամբրոնացին, Յակոբ Կլայեցին, Գրիգոր Սկեւռացին եւ ուրիշներ:

Սակայն յայտնի հեղինակների կողքին մինչեւ ուշ միջնադարը ներառյալ ապրել եւ ստեղծագործել են բազմաթիւ երաժիշտ-երգեցողներ, որոնց անուններն անյայտ են մեզ: Նրանց երգերը սիրուել եւ յարատեւել են ընդհուպ մինչեւ մեր օրերը, հաւաստելով այն իրողութիւնը, որ այդպիսի

անանուն նուիրեալ մշակների շնորհիւ հայ հոգեւոր երգարուեստը կարողացել է գոյատեւել, պահպանելով եղած աւանդոյթները:

Հարկ է նշել, որ միջնադարեան հոգեւոր երգարուեստը պահանջում է համարժէք մոտեցում, ինչը յաճախ անտեսվում է: Եթե խօսքը շարականների մասին է, ապա պետք չէ տարակուսել, որ նրանցից շատերը կարծես իրար նման են, կրկնում են մէկը միւսին: Միջնադարեան արուեստն ընդհանրապէս /ճարտարապետութիւն, մանրանկարչութիւն եւ այլն/ ամենուրեք զարգացել է կանոնի պայմաններում, այսպէս կոչուած «նոյնութեան» էսթետիկայի պահանջներից ելնելով: Երգարուեստի դէպքում կանոնը արտայայտուել է ութ հիմնական եւ երկու ստեղի աւանդական ձայնեղանակների հաստատագրմամբ, որոնցից դուրս, ըստ միջնադարեան գեղագէտ-աստուածաբանների, մնացած երգերն անընդունելի էին: Հայ միջնադարեան երգահանները եկեղեցու կանոնական արուեստի պայմաններում կարողացել են ստեղծել իրապէս կենսական հնչողութեամբ, խորը կրօնական, հայրենասիրական եւ բանաստեղծական զգացումներով յագեցուած երկեր: Նրանց գեղարուեստական նշանակութիւնն անանց է:

Ժողովածուն կազմելիս առաջնորդուել ենք հետեւեալ սկզբունքներով. եղած ձայնագրութիւններում հանել ենք տակտի գծերը, ձգտելով հնարաւոր չափով վերականգնել միջնադարեան երգեցողութեան նախնական բնոյթը, որի մէջ որոշիչ էին հանդիսանում երգուող վանկով պայմանաւորուող մարդկային շունչը, քայլքը, ձեռքի շարժումը: Որոշ դէպքերում բեռնաթափել ենք նոտային տեքստը աւելորդ ալտերացիոն նշաններից, հեշտացնելով նրա ընկալումը: Գրական տեքստերը երգի փոքր ծաւալի դէպքում ամբողջութեամբ բերուած են նոտային տեքստի տակ, կամ առանձին բերուած են երկրորդ տնից սկսուած /առաջինը զետեղուած է նոտային տեքստի տակ/, բացառութեամբ այն դէպքերի, երբ տեքստը գաղափարուած է ըստ անուանական ակրոստիքոսի: Այն ստեղծագործութիւնները, որոնք ունեն բանաստեղծական ծաւալուն տեքստ, բերուած են աւանդաբար երգուող մասով:

Ժողովածուն հասցէագրուած է ինչպէս երաժշտանոցների ուսանողներին, երաժիշտ-կատարողներին, երգահաններին, այնպէս էլ առհասարակ հայ հոգեւոր երգարուեստով հետաքրքրուողներին:

**ԱՆՆԱ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ,**
արուեստագիտութեան դոկտոր, պրոֆեսոր

# ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

# Մեսրոպ Մաշտոց

## Յամենայն ժամ

*Միջակ*



# Բազում են Քոյ գթութիւնքդ




ի Քոյ ի միւս ան - գամ
գա - լըս - տեա - նըն յոր - ժամ գաս դա - տել
զեր - կիր, ո - ղոր - մեա Աս -
տը - ւած քա - ւիչ իմ:

# Անկանիմ առաջի Քոյ, Տէր




ըղ - ձայն:
Բազ - մա - մե - ղիս ո -
ղոր - մեա:
Մաք - սա - ւո - րին Հա - ռա -
մամբ կար - դամ առ
Քեզ, Փըր -
կիչ եւ քա - րե -
բար:

# Սահակ Պարթեւ

## Այսօր գոլով ի Բեթանիայ

*Չափաւոր*



Այսօր գոլով ի Բեթանիայ,
զՔոյ զաշխարհակեցոյց
Սուրբ զՅարութիւնդ
Յառաջագոյն ծանուցեր՝
Անապականաբար կոչմամբ
Զչորեքօրեայն ի Թաղմանէ,
*Կենդանարար Քրիստոս, կեցո ըզմեզ:*

Այսօր գոլով ի Բեթանիայ,
Եբրայեցւոց մանկունքն
Սքանչացեալ ասէին՝
ԸզՄարիամու զեղբայրըն
Ի Թաղմանէ յարուցեալ՝
Որդւոյն Մարիամու.
*Կենդանարար Քրիստոս, կեցո ըզմեզ:*

# Այսօր կանգնեցաւ աւազան




38137

ԵՐՊԵՏԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ЕРГОСКОНСЕРВАТОРИЙ


բարք, մատ - նե - լոց է
զխս ի մահ, եւ ո - րո -
չի յա - չա - կեր - տա - ցըդ:
Զայն լը - եալ Պետ - րո - սի
ակ - նար - կէր առ Յով - հան -
նէս, հար - ցա - նել թէ ով ի -
ցէ: Բա - նըն, զոր ա -
սաց Յի - սուս, տրրտ - մե - ցոյց
զխր զա - չա - կերտսն, եւ
խռո - վե - ցան ա - մէ - նե - քեան:

# Արծաթսիրութեամբ մոլեալ



Ընդ որում ես համբուրեցից ասէ,
ըզնա կալարուք.
Ով համբոյր նենգութեան,
Նշան եւ առիթ մահու:

Մերկացավ յինքենէ
զաստուածային սուրբ հոգին,
եւ ըզգեցաւ ըզսատանայ որպէս
հանդերձ արկաւ զիւրեաւ:

Ի գիշերին յորում մատնէր
Փրկիչն մեր ի մահ խաչին,
եւ ի լեառըն ձիթենեաց,
աղօթելով զայս ասէր,
Հայր, անդո յինէն զբաժակս:

# Մովսէս Խորենացի

## Ծագումն Հրաշալի



# Խորհուրդ մեծ եւ սքանչելի



Ծընաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան, օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Անքաւելին երկնի եւ երկրի
Ի խանձարուրըս պատեցաւ,
Ոչ մեկնելով ի Հօրէ՝
Ի սուրբ այրին բազմեցաւ:

# Զանճառելի լուսոյ մայր






Զանհաս տնօրենութեան մայր եւ զանձառ
տաճար Աստուծոյ բանին օրհնութեամբ
մեծացուցանեմք:

Զրոլորից փրկութեան մայր, որ զանտանելին յէից
ի յարգանդի եբարձ, զնամենեքեան օրհնութեամբ
մեծացուցանեմք:

# Լոյս ի լուսոյ






Դու Աստուած ի յերկրի երեւեցար
եւ ընդ մարդկան շրջեցար,
եւ փրկեցէր զտիեզերս յանիծիցն Ադամայ:

Քեզ ի յերկնից վկայեալ Հօր Քոյ ձայն,
ասէ՝ դու ես իմ որդի, եւ սուրբ Հոգին զքեզ յայտնեաց
աղաւնակերպ երեւմամբ:

Զքեզ որ Հագաւ եւ Հրով մաքրեցեր զմարդկան
աղտեղութիւն,
Որպէս զԱստուած եւ զփրկիչ ամենեքեան օրհնեսցուք:

Փրկիչն երեւեցաւ եւ զաշխարհս ապրեցոյց
ի պատրանաց Թշնամւոյն որդեգրութիւն շնորհելով
ի ձեռն մկրտութեան:

Ջրով կիզու զմեղս մեր այսօր երեւեալ ապրեցուցիչն,
եւ զովացուցան զաշխարհս աստուածային ջրովն:

Զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց
ի Յորդանան ի գետն,
եւ ինքեան իշխանութեամբ զամենեսեան ապրեցոյց:

ԶՀին մարդն նորոգելով, փրկիչն ի մկրտութիւն
գայ այսօր զի զապականեալ զբնութիւնս ջրով նորս
գործեսցէ,
անապական զգեստ փոխարէն տալով մեզ:

Մկրտի Քրիստոս եւ սրբին ամենայն արարածք,
եւ տայ մեզ Թողութիւն մեղաց,
ջրով եւ Հոգով վերասրբելով զմեզ:

# Անթառամ ծաղիկ






Համեղաճաշակ պըտղոյն բանաւոր բարունակ,
Ցոր մեկնեցաւ մեզ ողկոյզն անըսպառ յուրախութիւն
Տըտմեցելոցն ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան,
Սրբուհի անարատ ամենեքեան:

Քաղաքաւարեալ ի մարմնի անարատ վարուք
Այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբըն
Վերափոխեցար յարքայութիւն որդւոյ Քոյ եւ Աստուծոյ մերոյ,

Բարեխօս խոստովանողացս,
Սրբուհի անարատ ամենեքեան:

# Յովհան Մանդակունի

## Երանելի սուրբ առաքեալք



Որք առիք իշխանութիւն ի վերայ ազգի մարդկան,
կապել եւ արձակել ի յերկինս եւ ի յերկրի,
արձակեցեք ըզմեզ ի կապանաց մեղաց մերոց:

Խաչակցեալք ընդ Քրիստոսի եւ ընդ նմին թագաւորեալք
Ի միասանգամ գալըստեան նորա նըստելոց էք դատաւորք,
Թողութիւն շնորհեցէք եւ մեզ մեղաւորացս:

... եւ այլն (Թ տուն)

# Գովեա Երուսաղէմ




Փրկողին տիեզերաց
Կենարար յարութեամբն.

Երգեսցուք ընդ Հրեշտակս օրՀնութիւնս,
Ալելուիա, ալելուիա:

Եկայք մանկունք
Առագաստի երկնաւոր փեսային:

Երգեսցուք ընդ Հրեշտակս օրՀնութիւնս,
Ալելուիա, ալելուիա:

# Կոմիտաս Աղցեցի

## Անձինք նուիրեալք



Բարբառք երկնաւորք լցին զերկիր,
Քանզի Հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս,
Ողջակէզք բանաւորք եւ զոհք փրկութեան
Եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ
Ցիմարեցոյց զթագաւորն եւ պակեան Հեթանոսք
Ի գեղ սքանչելի եւ աստուածատուր կուսանացըն.
Տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին:

...

Հռիփսիմէ, մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի,
Ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հրեշտակըս,
Եղեր օրինակ սըրբութեան կուսանաց
Վարդապետութիւն արանց արդարոց:

Զեզ նմանիլ կարօտին ամենայն հոգիք
Միացեալք սըրբութեամբ եւ սիրոյն Քրիստոսի,
Զի մահվամբ ձերով մեզ ճանապարհ հորդեցիք
Ելանել ամենայն մարդոյ առ Աստուած:

...եւ այլն /36տուն/:

# Անանիա Շիրակացի

## Վասն մերոյ փրկութեան

*Չափաւոր*



# Առաքելոյ աղաւնոյ



Աննիւթական աղաւնի անքննելի,
որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի Հօրէ
պատմէ զահաւոր եւ զմիւսանգամ գալուստն,
զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս եղողին
ի Հօրէ Հոգւոյն սրբոյ,
որով առաքեալքն արբեցան անմահական բաժակն
եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

# Սահակ Ձորափորեցի

## Էջ միածինն ի Հօրէ




Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի
պատմէր ցնծութեամբ Հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

# Որ նշանաւ ամենայաղթ






Որ շնորհեցեր մեզ յաղթանակ
Ընդ դիմամարտութեան
Վանել ըզզօրութիւնըս Թըշնամւոյն:

Սովաւ ըզկեանըս մեր խաղաղացո
Միայն բարեգութ,
Եւ փըրկեա յամենայն փորձութենէ:

# Ուրախ լեր


Ծանր
Ու - րախ լեր, սուրբ ե -
կե - ղե - ցի, քան - զի
Քրիս - տոս ար - քայն
երկ - նից այ - սօր պը - սակ-եաց ըզ -
քեզ խա - չիւն ու - րով, եւ
զար - դար - եաց զա - մու - ըրս
քո սքան - չե - լի
փա - ռօքն ու - րովք:

Խնդա յոյժ դուստր Սիովնի,
քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ,
եւ Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակիլ ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացն վերառեալ
տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիւնս,
անքնին քո խորհրդով։

# Ստեփաննոս Սիւնեցի

## Երգեցէք Տեառն




ամ - պոյ ա - ռաջ - նոր - դեայ ժո - ղո -
վըր - դեան Իս - րա - յե - լի
ի յա - նա -
պատ, եւ ըն - կըղ - մեաց զփա -
ռա - ւոն զօ - րօքն խը - ռովք
ի ծով կար - միր, եր - գե -
ցէք Տեառն երգ
նոր ըղ - Քեզ


ա - ղա - չե - մըք Հա - նա - պազ
սուրբ Աստ - ւա - ծա - ծին,
բա - րե - խօս - եա Քրիս - տո -
սի Աս - տու - ծոյ մե - րոյ փըր-
կել ըզ - մեզ ի փոր - ձու -
թե - նէ եւ յա - մե -
նայն վը - տան - գից
մե - րոց:

# Փառաւոն Հանդերձ կառօքն




Յորժամ Հերձեաց Մովսէս
Խաչանիշ գաւազանաւ,
Պատառեցան անդունդք,
Եւ առաջնորդէր նոցա
Անմեկնելի լոյս:

Սա է բանն Աստուած,
Որ յառաջ քան զյաւիտեանս,
Անճառելի գալըստեամբն իւրով
Յայտնեցաւ տիեզերաց
Ծնեալ ի կուսէն:

# Խոսրովիդուխտ

## Զարմանալի է ինձ

*Ծանր*




ե –
րա – ժիշ –
տա –
կա – նաց
ձայնս
ող –


բոց
բոց
Հըն
ճը
12
մունք
ով
ե
րա
նե
մ
Տէր



12
Վա
-
Հան
ընտ
-
րեալ
յԱս
-
տու
-
ծոյ:

Առաւել յորդորէ այս զհոգւոյս մասունըս,
Յօրինել քեզ երգս ոչ զղջականըս,
Այլ հոգեւորըս, եւ ուրախարարըս,
Յորդորականըս, եւ ներբողեանըս,
Ո՛վ երանելի տէր Վահան, ծառայ Քրիստոսի:

Զարհուրեցուցանէ զքոյ ճգնութիւնդ
Զմարմնոյս բնութիւնըս,
Իսկ դու առաւել զտար.
Ո՛վ երանելի տէր Վահան, սիրող Քրիստոսի:

Արտաքնոցըն ըղգաստքըն
Ստեղծիչ բանք սնոտեացն ի պարտութիւն.
Իսկ քոյդ սիրայնոյ՝ աստուածարեալ եւ ոգեշահ.
Ո՛վ երանելի տէր Վահան, ընտրեալ յազատաց:

Որպէս քաջ նահատակ,
Պատրաստեալ ի պատերազմ,
Կատարեցեր զընթացըս քոյ,
Արիաբար՝ յազգացն հարաւայնոյ,
Դասաւորեալ ընդ անմարմնականսն.
Ո՛վ երանելի տէր Վահան, Գողթնեացն իշխեցող:

# Յովհան Օձնեցի

## Նահատակ բարի






Որ ընտրեցար ի դասս
Երկնաւոր զօրացն,
Պըսակեցար ի Թագաւորէն
Զանթառամ ըզպսակն
Եւ մըկըրտեցար արեամբըդ քո
Սըրբոյ առաջին վըկայ Քրիստոսի
Սուրբ Ստեփանոս նախասարկաւագ մեծ:

Մարտեար ընդդէմ Թըշնամւոյն
Այսօր եւ գնեցեր արեամբըդ քո
Զարքայութիւնն ի պարծանս
Ազգի մարդկան, ճգնաւոր Քրիստոսի
Գոհութիւն երեք սըրբենին,
Որ ընկալար ըզվըկայդ իւր
Սուրբ Ստեփանոս ի վերինն Երուսաղէմ:

# Ստեփաննոս Ապարանցի

## Սրբութիւն սրբոց




սէ - րով բա - նա - կան
կեն - դա - նեաց, ա - ղա - չեմք ըզ - քեզ
Տէր,
պահ - պան - եա րզ - մեզ ընդ
Հո - ւա - նեա խա -
չի Քոյ սուրբ:

Սրբութիւն սրբոց շնորհեցեր եկեղեցւոյ
Սուրբ ըզխաչ Քոյ Տէր,
Քանզի հեղուսիւք ձրգմամբ անարատ
Ձեռին Քոյ ի սմա համահաւաքեալ առ Քեզ
Զհամօրէն սեռս բանական կենդանեաց,
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Տեսիլ անճառելի խորհրդոյն,
Զոր յառաջագոյն ցուցաւ լուսածին սուրբ Նշանն,
Քանզի սերովբէն բոցեղէն
Հրանիւթ պարունակէր ի մէջ
Պանծալի եւ վայելուչ դրախտին:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Երկնաչափ ցուցաւ սանդուխ իմանալի
Ճանապարհ առնելով որդւոց մարդկան
Ընդ դուռըն կենաց մտին,
Քանզի խորհրդեամբ ցուցաւ
Ըսքանչելոյն Յակովբայ,
Երկնաւոր զօրացն էջք եւ ելք արարան:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Փայտ կենաց ըզսա հոգւովն
Վերագոչեաց գերահրաշ իմաստունն,
Քանզի արարիչն արարածոց բարձրացաւ ի սմա
Եւ կողահոս շիթք անապական արեանն
Ըզկողածնին ջընջեաց ըզմեղս:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Առաջնորդ ցուցաւ սիւնատեսիլ փայլմամբ
Ժողովրդեանն Իսրայելի գաւազանասաստ
Հերձմամբ ըզլեռնացեալ ըզկուտակումըն ջուրց
Ի կարծրութիւն փոխարկեալ վիմի:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Ներգործեալ հրաշըս խաչանիշ
Համբարձմամբ ձեռացն Մովսէսի
Ընդդէմ Ամաղեկայ ի մարտի պարտէր ըզԲելիար,
Եւ ձուլադրոշմըն ձուլիւք են Թագաւորեալ կորզէր:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Նըշանաւ խաչի Քոյ Տէր,
Սարսեալ հալածեցաւ աշխարհակալ խաւարն,
Քանզի զմեղուցեալ ըզմարդըն յանցանօք
Փայտին կենաց խաչակից առնելով
Պսակեցեր ամենայաղթ սուրբ նըշանաւդ:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Որ ի վերջնումն աւուր համառօտի
Լուծանէ ժողովեալ գիր ըզկարծեցեալ ճաճանչն,
Եւ ահեղահրաշ ճառագայթիւք
Ծոլանայ յերկնից գերահրաշ նըշանն,
Եւ հեծեալ կոծին ամենայն ջոկք անհաւատիցն:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

Սըրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ
Ընկալ, Տէր, ըզմաղթանըս մեր,
Յորժամ յարկելից լուսածագիս անճառ հրաշիւք
Կարապետ առնելով գյաղթանակ սուրբ նըշանն:
*Աղաչեմք ըզՔեզ Տէր,*
*Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ*
*Խաչի Քոյ սուրբ:*

# Յակոբ Սանահնեցի

## Յանսկզբնական ծոցոյ Հօր



Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ
Բանըս մարմնացար ի կուսէն
Վասըն փըրկութեան մերոյ,

*Աղաչեմք ըզՔեզ*
*Զնընջեցեալսըն մեր ի Քեզ*
*Ուղիղ հաւատով յիշեա, Տէր:*

Անոխակալ քաղցրութեամբ որդի Աստուծոյ
Հաճեցար բառնալ ըզմեղս աշխարհի
Քո խաչելութեամբըն:
*Աղաչեմք...*

Կամաւորական մահուամբ Քո լուծեցեր
Զերկունըս մահու
Եւ արժանի արարեր Թողութեան
Յանցանաց քաւիչ Քո արեամբ:
*Աղաչեմք...*

Որ փոխանակ մեղաւորաց
Ըզմեռանիլ յանձն առեր,
Իջանելով ի դըժոխըս փըրկեցեր
Ի մեղասէր բանտէն ըզգերեալսն:
*Աղաչեմք...*

Բարեբանեմք զանչափ Քոյ զմարդասիրութիւնդ,
Որ երեքօրեա յարուցեալ
Զկենդանութիւն պարգեւեցեր աշխարհի:
*Աղաչեմք...*

# Գրիգոր Մագիստրոս

## Զորս ըստ պատկերի քում



Որ շնորհես մեզ կենաց տուող
Զկենդանագիրն քո ծառայական կերպի,
Բերելով զբոլորից զվերբերողդ,
Ի փառս սուրբ Երրորդութեանդ:

Կեցո զորդի ծառայի քո,
Զոր ի Հռովմայ գահիցն վերապատվեցեր,
Ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ:

Որ զվերջինս զայս հրաշագործեցեր,
Քեւ չափ ընակչութեամբ հիմնափայլեցեր,
Զպանծալի եւ զփայլեալ փառս տանս
Այս վերջինս քան զառաջինն:

# Պետրոս Գետադարձ

## Արիացեալք

### Տաղական ս. Վարդանանց




խա
բէ
ու -
Թեան,
Հան-ճա
-
բեղք
ի Հա - տու - ցու -
մըն դա - և -
Չափաւոր
նացն զամ - բա - բըշ - տացն ար - դա -
բա - դատ չափ - մամբ։




Փոխանակեալք զունայնութիւնս
Ընդ ճշմարիտ յուսոյ անմահութեանն,
Փափագանաց ձեռոց ըղկատարումն,
Մաքրիլ արեամբ յաղթոյ մեղաց տըղմոյ:
Զօրականք յաղթողք պըսակեալք ի Քրիստոսէ:

Հայցեք զխաղաղութիւն,
Ճըշմարիտ վըկայք սըրբոյ Երրորդութեանն,
Նեղեղոցս յանօրինաց բըռնութենէ,
Զի ցընծասցեք յաղթանակաւ մարտի ձերոյ,
Նահատակք յարգոյք:
Զօրականք յաղթողք պըսակեալք ի Քրիստոսէ:

# Յովհաննէս Սարկավագ

## Անսկիզբըն բանն Աստուած






Անսկիզբըն բանն Աստուած, որ վասն մեր համբեր մահու,

Բառնալով ըզդատակնիք անիծիցն առ ի մէնջ,

Գերապանծ մաքրութեամբ ըզմարդիկ վերագրեաց խաչակից իւր եւ վըկայք
կամաւոր մահուամբ իւրեանց:

Դիմամարտ գոլով սըրբոյն ընդ կռապարիշտ պաշտամունս,

Երջանիկ ճակատամարտք յայտնեցան անպարտելիք,

Զի Աստուած բոլորից տիրաբար սիրեցին,

Է ակցին հօր հեռեւեալ ստացան ըզթագըն պարծանաց:

Ընթադըրբեալք զմահու խըոխտումն ընդդէմ մեղացըն վառեցան,

Թօղեցան յերկունս զանից զեր ի վերոյ քան ըզբնութիւնս

Ժուժկալեաք ի փորձ բանտից զելարանաց եւ կապանաց

Ի մըրցմունըս գազանաց սրոյ եւ հրոյ մենամարտեալք:

... եւ այլն (36 տուն)

# Ներսէս Շնորհալի

## Նորահրաշ պսակաւոր

### Տաղական ս. Վարդանանց






Երկնատր Թադաւորին զինու յաղթեալ ի պատերազմին,
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս.
Խորէն խորհըրդական եւ ծանուցեալ անուն բարի,
Խազելոյն վըկայ եղեալ, հեղմամբ արեան պըսակեցաւ։

Բենական լուսով լըցեալ արիացեալըն քաջն Արտակ,
Թաթաւեալ ի կարմրութիւն բոսորային բըղխեալ աղբերն.
Ըգփրկականն ըմպեալ գըաժակ եւ մըկըրտեալ արեամբ իւրով,
Դասակցեալ ընդ անմարմնոցըն երրորդութեանն երգել ըգփառս։

# Որ գերագոյն քան ըզընութիւնս

## Տարական Տրդատայ Թագաւորին






Որ համանըման բաբելացուցըն
Բռնաւորին ի յանբանից
Փոխեալ կերպարան
Բռնութենէն նուաճելով
Զարքայն մեծ Տրդատ:

Վասն որոյ մանկունք եկեղեցւոյ
Յիշատակի սորա օրհնեն ըզՔեզ Տէր:

Որ ի ձեռըն մաղթանաց
Սրբոյն Գրիգորի,
Ի մարդկային բնութիւն դարձուցեր
Յանասնեղէն ի բնութենէն
Նորաստեղծեալ զարքայն մեծ Տրդատ:

Վասն որոյ մանկունք եկեղեցւոյ
Յիշատակի սորա օրհնեն ըզՔեզ Տէր:

# Կանխեալ Յովնանու






Յահեղ բարբառոյ մարգարէին
Զարհուրելով Թագաւորին
Խոնարհեալ գիջանէր ի սուգ։

Պահօք պատուիրէր զժողովրդեանըն
Պաղատիլ առ Տէր,
Խնդրելով զԹողութիւն մեղաց։

# Որ կոչեցեր զՀեռացեալքս




Որ գերագոյն քան ըզբնութիւն
Զարչարանօք քո ընտրելոյն
Դարձուցեր ըզմոլորեալքս
Ի գիտութիւն ճըշմարտութեան:
*Բարեխօսութեամբ սորա՝*
*Ողորմեա մեզ Աստուած:*

Որ ի վիրապն անդընդային
Ջաղխեր նուաւ զգլուխ վիշապին,
Ի գբի ներքնումն իջմամբ նորին
Բարձրացուցեր զմեզ ի յերկինս:
*Բարեխօսութեամբ սորա՝*
*Ողորմեա մեզ Աստուած:*

# Այսօր տօնէ եկեղեցի



# Օրհնեցէք մանկունք




երկ - նայ -
նոցն
ըզ -
Հայրն
երկ - նա -
ւոր,
որ
մարմ - նա - ցեալ


բա - նին
վր -
կայ - եաց
յերկ -
նից
այ -
սօր
ի
թա -
փօր
յե -
րինն:

# Խաչատուր Տարոնեցի

## Խորհուրդ խորին




որ
գար
-
դա
-
րե
-
ցեր
գվե
-
րին
պե
-
տու
-
Թինդ։

# Յակոբ Կլայեցի

## Այսօր ցնծան




Այսօր վերինըն Սիօն գոչէ
Գոչէ գերգըս սրովբէից,
Ձերեքսրբեանն ասելով յաւուր
Ծնընդեան սրբուհւոյն:

Այսօր աստեղք եւ լուսին
Ընդ արեւու հրրճուելով,
Գովեն ըզլոյսն ի Հօրէ
Ծնընդեան լուսոյ մօրն:

Այսօր ծերքն օրինականքն
Մանկամբք նորոյ Սիովնի,
Երիտասարդք եւ կուսանք
Խընդան ծնընդեամբք տիրուհւոյն:

Այսօր գունդք առաքելոցն
Եւ պարըք նախատեսացն
Յաւուր ծնընդեան մօր բանին
Երգեն ըզփառս ի բարձունս:

# Վարդան Արեւելցի

## Որք զարդարեցին

### Շարական ս. Թարգմանչաց






Որք զերկրաւոր մեծութեամբ փառաց խաւար կոչեցին.
ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝
անճառ բանին արժանի եղեն.
երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք զօրութեամբ հօր իմաստութեամբ էին անեղին.
հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի
թարգմանութեամբ նշանագրութեան.
երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք նորափետուր բանիւ զարդարեալք պայծառազարդեցան –
եկեղեցին Հայաստանեայց ի ձեռըն սրբոյն Սահակայ.
երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:

...եւ այլն:

# Սքանչելագործ Աստուած




Որ սո – ւավ լու – սա – ւո – րե – ցեր
ըզ – տի – ե – զերս, սո – րին բա –
րե – խօ – սու – թեամբ պահ – եա ըզ – մեզ։
Օրհ – նե – ցէք ա – մե – նայն գործ Տեառն
ըզ – մեր, ա – մե – նայն գործք Աս – տու – ծոյ եւ
ա – մե – նայն ա – րա – րածք օրհ – նե –
ցէք, սուրբ եւ խո – նարհ սըր – տիք գո – վե –
ցէք եւ ա – ռա – ւել բարձր ա – րա – րէք
ըզ – նա յա – ւիտ – եանս։

# Յովհաննէս Երզնկացի

## Լերինք ամենայն

Կանոն սրբ. Գրիգոր Լուսաւորչին






Որ առաւել խորին խորհրդով
խնդայ քան զԱրարատեանըն բարձր Մասիս,
քանզի ի նմա հանգեաւ սուրբն Գրիգորիոս
տապանն ապրեցուցիչ ի հոսանաց մեղաց Հայաստան ազանց,
որով փրկիմք միշտ ի ջուրց հոսանաց։

Գեղապանծ լուսով բերկրեալ զուարճանայ
լեառն Սեպուհոյ հանգոյն Սինայի,
յորժամ եկաց կամարն ամպեղէն սուրբն Գրիգորիոս
գերահրաշ լուսով զարդարեալ նման Մովսէսի,
որով փայլին երեսք շնորհօք սուրբ Հոգոյն։

# Այսօր զուարճացեալ

## Կանոն սրբ. Մեծին Ներսէսի Հայրապետին






Այսօր զուարճացեալ տօնեն երկնայինքն
ընդ մարդկան պարակից եղեալ փրկութեան մերոյ
քանզի յայտնեցավ մեզ Հոգեւոր գանձըն
լուսոյ արեւելեան արեգականըն ճառագայթ սուրբըն Ներսէս,
բարեխօսութեամբ սորա Տէր,
պարգեւեա գլխաղաղութիւն Հայաստանեայց աշխարհի։

Բարունակ ողկուզաբեր ճշմարիտ որթոյն,
մշակեալ հայրական աստուածային աջովն.
յորմէ բղխեաց բաժակն ուրախարար տրտմեցելոյ ազինս,
որով արբեալ զմայլեցաք յուրախութիւն Հոգեւոր։

Գարնանաբեր հնչումն հարաւային հողմոյն
ճառագայթեալ հրով աստուածային Հոգոյն.
որով հալեցաւ սառըն կռապաշտութեան հիւսիսաբնա ազանց,
եւ եղեն ծաղկեալք աստուածային գիտութեամբ։

... եւ այլն /36տուն/:

# Կիրակոս Երզնկացի

## Արեւելք գերարփին






Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին զանմայր
ծընեալն առաջին ծընարան Հայր երկրորդին.
Բարեխօսեա՛ միածնին Աստուածածին մա՛յր բանին:

Բանին Հօր մարմնարան եւ առագաստ բնակութեան,
որ կաթամբ կուսական կերակրեցեր զէակն բան:
Բարեխօսեա՛ միածնին Աստուածածին մա՛յր բանին:

Գերագոյն սրբութեամբ եւ կուսական մաքրութեամբ
բարձէր զանՀասն բնութեամբ ի գիրկս քո սնողեամբ:
Բարեխօսեա՛ միածնին Աստուածածին մա՛յր բանին:

Դու ծաղիկ անթառամ տոՀմի սեռիս մարդկութեան
եւ չառաւիղ օրՀնութեան նախնւոյ ծնողին մեր բնութեան:
Բարեխօսեա՛ միածնին Աստուածածին մա՛յր բանին:

... եւ այլն /36տուն/:

# ՏԱՂԵՐ ԵՒ ՄԵՂԵԴԻՆԵՐ

# Գրիգոր Նարեկացի

## Հաւուն, Հաւուն

### Տաղ Յարութեան



# Հաւիկ

## Տաղ Յարութեան




մա – նըդ ո՜վ,
ո՜վ,
ո՜վ,
ո՜վ
նը – ման,
ո՜վ,
ո՜վ,
ո՜վ,
նը – ման:
Ան –
նը – ման:

# Հաւիկ

/տարբերակ/

*Ազատ, հիպայմամբ*






Զթեւս արծաթափայլս ունէր աննման,
արեգական շողոյն նման աննման։
Աննըմանիդ ո՞վ նման, դո՛ւ նման։

Զձայնիկն ողորմուկ ածէր աննման,
գաբրիէլեան փողոյն նման աննման։
Աննըմանիդ ո՞վ նման, դո՛ւ նման։

Զաչերն արտասուօք լընոյր աննման,
առաւօտեան ցօղոյն նման աննման։
Աննըմանիդ ո՞վ նման, դո՛ւ նման։

# Սայլն այն իջանէր




լեռ - նէն ի մա - սեաց
1-4. Եւ ի վե - րայ նո - րա
5. Եւ յաջ մէ նո - րա
6. Յա Հե - կէ նո - րա
7. Ա - ռա - ջի նո - րա
8. Ի Գիր - կըս նո - ցա
9. Ի ձե - ռին նո - ցա
1. ա - թոռք են կար - գեալ.
2. Գա - Հոյք ռս - կե - ղէնք.
3. բե - Հեզք ծի - րա - նիք.
4. որ - դի ար - քա - յի.
5. վեց - թեւեան սե - րով - բէքն.
6. բազ - մաչեայ Քե - րով - բէքն.
7. ման - կունք գե - ղե - ցիկ.
8. խաչ տէ - րու - նա - կան.
9. սաղ - մո - սարան եւ քնար.
Որք եր - գէ - ին եւ ա - սէ - ին.


Ծանր
Փառք
Քրիս - տո - սի ա -
մե - նա -
գոր
յա - րու -
թեան:

# Ահեղ ձայնս



# Գոհար վարդն

## Տաղ Վարդավառի




վառ
ա
-
ռեալ
ի
վե
-
Հից
վար
-




Ի վեր ի վերայ վարսից
ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի Համատարած ծովէն
պղպջէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
շողշողէր պտուղն ի ճըղին:
Ի փունջ խուռներամ վարդից
գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան.
Այդ սօս ու տօսախ ծառերդ
վարդագոյն ոստս արձակեցին:

# Աչքն ծով

## Մեղեդի ծննդեան




ծա - ղա -
խիտ
ծա - ա -
լա


նայր
յա -
ռա -
5
3
3
3
LO -
3
3
5
3
տուն,




Երկու փայլակնաձեւ արեգական նման,
շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս։

Խընկեալ ի կընդըրկէ
բուրվառ հրով աստուածայնով լցեալ,
ձայն ահեղագոչ որ ի նմանէ հնչէր։

# Գրիգորիս Պահլավունի

## Ով զարմանալի

### Տաղ Ջրօրհնեաց




Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
չառնոյր Կարապետն ըզմկրտելն ի յանձն:

Յորդանան լըւեալ՝ փախստական դառնայր,
վտակ առ վտակ պատգամաւորր լինէր:

# Ներսէս Շնորհալի

## Յիշեսցուք ի գիշերի




մի մեր - ժէր ըզ - մեզ խա -
Երկիւղած, փոքր ինչ արագ
պառ, զար - թուց-եալքս ի զբաղ - մա - նէ
գի -շե - րա - յին Հան - գըս - տէ - նէ
Գովաբանական, նախկին չափով
յա - ւի - տեանս յա - ւի - տե - նից ա - մէն,
Ա - լէ - լու - իա,
Ա - լէ -
լու - իա, Ա - լե - լու - իա, Ա - մէն:

# Առաւօտ լուսոյ

Չափաւոր – ծանր



Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա։

Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի Հոգւոյս
Բան քեզ ի Հաճոյս։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտող զիս արա։

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոցն։

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։

Զարթիր, Տէր, յօգնել,
Զարթո զթմրեալս,
Զուարթնոց նմանիլ։

Էդ Հայր անսկիզբն,
Էակից որդի,
Է միշտ սուրբ Հոգի։

Ընկալ զիս, գթած,
Ընկալ, ողորմած,
Ընկալ, մարդասէր։

...եւ այլն /36տուն/։

# Աշխարհ ամենայն



Աշխարհ ամենայն՝
Առ իս նայեցեալ,
Ախտակից լերուք:

Բանամ ըզշրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէս:

Գող եղէ մեղաց
Գըտող կորըստեան,
Գուբ ինձ փորեցի:

Դաւեցի անձն իմ,
Դաւաճանեցի՝
Դարան գործեցի:

Երբեմն էի լոյս
Եւ այժմ եմ խաւար,
Եւ ստուեր մահու:

Զի՞արդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց,
Զի բազում են յոյժ:

...եւ այլն /36տուն/:

# Նայեաց սիրով



# Յարեւելից մինչ ի մուտս




ծա - գեաց ըղ - լոյս ա - րե - գա - կանն
այս - օր յաշ - խարհս։
Յա - րե - ւե - լից յա
րեւ - մուտս ման -
կունք Սի - ով - նի,
օրհ - նե - ցէք միշտ
ան - դա - դար
զծա - գո - ղըն լու - սոյ։

# Տրտմահաղորդ

Չափաւոր



# Ուրախացան ազգք մարդկան



# Ստեղծող մանկանց




շնոր - հիւ օրհ - նեալ
ծր - նըն -
ղեան Քո։ Ե - կայք ման -
կունք նոր Սի - օ - նի
տա - ցուք փա - ռս
Տեառն ա -
մէ - նի։ Տէր,
ո - ղոր -
մեա։

# Ի գերեզման յարուցելոյն

## Տաղ Յարութեան

*Ծանր, բայց ոգեւոր, աւետական*






Պահապանքըն զարհուրեցան ի յահէն,
քանզի ի կոյս ի նորափոր տապանէն
յարեա՛ւ Քրիստոս, զարթեա՛ւ Քրիստոս,
ի կոյս գերեզմանէն, ի լո՛յս գերեզմանէն:

Առ սուրբ վիմին նստեալ գոչէր հրաշալին,
իւղաբերքըն քարոզելով ծաղկէին.
յարեա՛ւ Քրիստոս, զարթեա՛ւ Քրիստոս,
ի կոյս գերեզմանէն, ի լո՛յս գերեզմանէն:

# Նոր ծաղիկ


Խաղաղ, կմայլանքով
Նոր ծա - ղիկ պայ -
ծառ ցու - ցաւ
այս - օր ի
նոր գե - րեզ - մա - նէն:
Ագեւոր
Ե - րե - եալ լոյս
Յա - րու -
թեան, ա - ւե -
Որպէս ի սկզբան
տիս, ի խա - ւա -




Երփնազարդ հոգւոցըն տունկք
կանանչացան կենդանութեամբ:
*Երեւեալ լո՛յս Յարութեան, աւետի՜ս,*
*ի խաւարի ստուերաց մահու. աւետի՜ս:*
*Յարեա՜ւ Քրիստոս, աւետիս:*

Բնական լուսոյ սաղարթք
ի հոգեւոր գարնան փթթեալք:
*Երեւեալ լո՛յս Յարութեան, աւետի՜ս,*
*ի խաւարի ստուերաց մահու. աւետի՜ս:*
*Յարեա՜ւ Քրիստոս, աւետիս:*

Սիրով մեռեալըն վասըն մեր
յարոյց ընդ իւր զանկեալ բնութիւն:
*Երեւեալ լո՛յս Յարութեան, աւետի՜ս,*
*ի խաւարի ստուերաց մահու. աւետի՜ս:*
*Յարեա՜ւ Քրիստոս, աւետիս:*

# Մխիթար Այրիվանեցի

## Սիրտ իմ սասանի



# ՅովՀաննէս Երզնկացի

## Այսօր ձայնն Հայրական

### Տաղ ՋրօրՀնեաց



# Առաքել Սիւնեցի

## Ով պարտիզպան

Տաղ Յարութեան




լան
գՑի-սուս
մի – ա – ծի –
նրն,
որ կար –
ծեմ
թէ
դու




Մի՛ լար դու, ո՛վ կին, ե՛ս եմ Կենդանին,
եկ եւ տե՛ս զտեղին, զոր խոցեաց ազգն Իսրայէլին։

Մի՛ լար ցաւագին, յարեա՛ւ Կենդանին,
մեռեալն ի խաչին, զոր աստէն գերեզման եդին։

Մի՛ լար, Մարիամ Մագդաղենացի,
ե՛ս եմ Միածինըն որ յարեայ ի գերեզմանէն։

Դարձի՛ր եւ գնա՛ առ սուրբ Տիրուհին,
աւետեա՛ նըմա, թէ տեսայ ես ըզքո Որդին։

# ԱՆԱՆՈՒՆ
# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

# Տիրամայրն Հանդէպ Որդւոյն




պը - սա - կըն դի - տե - լով,
ողբ, կոծ, վայ տայր իւր ան -
ձին. «Ա - չա - ցըս լոյս
Որդեակ իմ, Յիսուս,
ես ընդ քեզ մե -
ռա - նիմ»:

# Ո՞ւր ես, մայր իմ




տա - սուք
ոչ զոք
ու - նիմ,
որ
ջուր խըն -
դրե - ցի քա - ցախ ար -
բի
յա - նո - րի -


նաց
ձե - ռա - նէ
յա - նօ - րի -
նաց ձե -
ռա - նէ:

# Ի կոյս վիմէն

## Յարութեան եւ Ծաղկազարդի




մէն
յա - բեաւ
ե - մուտ
այ -
այ -


եւ լղ -
ի սուրբ
գե -
քա -
րեա -
ղա -
խըն ի - գե - րո -
քըն Ե - րու - սա -


ղէն
ղէմ
ա -
ով - սան -
զա -
նայ
տեաց:
եր -
գով:

# Ի ԲԵԹՂԵՀԷՄ

## Տաղ Ծննդեան




բա -
րեք,
եւ
երկ -
նա - յինք,
ղուք
խո -
նար -


Հե
-
ցէ՛ք,
ի
Բեթ
-
ղե
-
հէմ
ի
յայ
-
ըըն
ըն
-
թա
-


ցեք,
գերկ –
նից
ար –
քայն
ի
մըս –
րին
տե –



սէք:
Գորովալից, թրթռուն
Այ
օ՛ր,
այ
օ՛ր,
օ
–
րօ՛ր,
օ՛ր.
օ –
րօ՛ր,
օ
–.
րօ՛ր,
օ
–
րօ՛ր:
Իմ
մի
–
ա
–
ծին


որ -
դեակս, օ - րօ՜ր,
օ՛ր.
իմ անգ - ըա -
նիկ՝ Ցի -
սուս, օ - րօ՛ր,
ծ՜ր.
օ - րօ՜ր, օ - րօ՛ր,
օ -
րօ՜ր,




Որոյ եկեալ ի Կուսէն ծընեալ,
յայն անարատ Մօրէն մարմնացեալ։
Երեք արքայք առ քեզ խոնարհեալ,
Զերրորդութիւնըն մեզ ծանուցեալ։
Այ օ՛ր, այ օ՛ր, օրօր, օ՛ր. օրօր, օրօր, օրօ՛ր,
իմ միածին որդեակս, օրօր, օ՛ր.
իմ անդրանիկ Յիսուս, օրօր, օ՛ր.
օրօր, օրօ՛ր, օրօր, օրօ՛ր. օրօր, օրօր, օրօ՛ր։

# Քրիստոս փառաց Թագաւորն

## Տաղ Տեառնընդառաջի






Քրիստոս փառաց Թագաւորն այսօր եկեալ յընծայումն,
կատարելով նա զօրէնս, քառասնօրեայ գալստեամբըն:
Զոր մարգարէն Եսայի յառաջագոյն գուշակեաց,
յԵրուսաղէմ քաղաքի, Սիմէոնի ծերունւոյն:
Աստուածային հրամանաւն կայր ծերացեալ ի տաճարն,
ոչ տեսանէր նա զմահ, մինչեւ տեսցէ նա զօծեալն:
Բարբառ եղեւ գալստեան եւ ահագին որոտման,
տաճարապետըն Քրիստոս, որ յընծայումն էր եկեալ:

# Ի գալստեան Տեառն

## Տաղ Տեառնընդառաջի

*Ուժգին, աւետալից խնդութեամբ*




վին, եւ ի յա - հէ փա - ռաց
նո - րա չար - ժին գօ - րու -
թիւնք: Ա - ւե - տեօք Տեա - ռըն
մեռ - եա - լըք յառ -
նեն, եւ սուրբք ա - մե - նայն ան -
դանդաղելով
ճառ փա - ռօք զար -
դա - րին:

# Աւետիս քեզ, Մարիամ

## Տաղ Աւետեաց

*Գնայուն, անկրակից խնդութեամբ*




սկզբ - նա - ւո -
րեաց. ա -
ւե - տիս,
ա - ւե -
տի'ս, ա -
ւե - տի'ս քեզ,
Մա - րի - ամ, ա -
ւե - տիս:

Բանաւոր տաճար եղեր, բանաւոր տաճար եղեր, դու երկնաւոր Թագաւորին.
ուրախ լեր, ուրա՛խ լեր, ուրա՜խ լեր, ուրա՜խ լեր, կո՛յս Մարիամ, ուրա՜խ լեր:

Գեղեցիկ գեղ գովելի, գեղեցիկ գեղ գովելի, գեղեցկաշէն տաճար մաքուր.
աննըման, աննըմա՛ն, աննըմա՜ն կոյս Մարիամ, աննըմա՜ն:

Դուռն եղեր դրախտին կենաց, դուռն եղեր դրախտին կենաց, դուստր իմաստուն մօրն Եւայի.
մայր լուսոյ, մա՛յր լուսոյ, մա՜յր լուսոյ կոյս Մարիամ, մա՜յր լուսոյ:

# Դիտելով

## Մեղեդի եկեղեցւոյ եւ Յարութեան

*Հանդարտ, բայց զգայուն եւ ջերմ*





տե -
լով
ըզ -


Հե -
Թա -
նոսս:
Զայ -


նէր,
ձայ –
նէր
տաա –
րա –
կին,


սի -
րա -
սը -
նունդ
սի -
ըել -
ւոյն:

# Յարեաւ Քրիստոս այսօր

## Մեղեդի Յարութեան




գան - կեալն ի դրախ -
տէն. նա եւ այ -
լոց գՀո - գի, որն
սուրբ Հա-րանց ըզ - գեր -
եալն ի բան -
տին՝ է - առ ա - ւար
եւ գե - րեաց Հը -
գորըն ի
պա - տե -
րազ -


մի ցըն - ծաս -
ցո՛ւք, ցըն-ծաս -
ցո՛ւք, ո՜վ ա -
գա - տեալք
ա - րեամբ
Գա - ռին, քան - զի ե -
բաց մեզ ճա - նա -
պարհ ու - ղով
խա - չին, եւ
շնորհ - եաց


գայն գոր կո - րոյս
Հայր մեր նախ -
կին: Եւ գր - ւար -
Թունք երկ - նից ընդ
մեզ եր - գակ - ցեալ գո -
չեն. «Օրհ-նեա՛լ է
սուրբ Ցա -
րու - Թիւ - նըդ,
գո-վեա՛լ է սուրբ
Ցա - րու - Թիւ - նըդ» :

# Յայն առաւօտին

## Տաղ Յարութեան

*Խաղաղ, հետզհետէ աճելով*




շա -
թա - թին,
լու - սա - փայլ
Հրեշ -
տա -
կըն
էր
նըստ - եալ
ի վե -




Քաղցրիկ բարբառէր սուրբ կանանց դասին,
յարեա՛ւ Տէր, յարեա՛ւ, Մարիա՛մ, մի՛ լար քո զորդին։
Երթեալ պատմեցէ՛ք զընդին Պետրոսին,
երթիցեն լեառն ի Գալիլիա, ժամադրեալ տեղին։
Տեսեալ Մարիամ զՏէրն ի պարտիզին,
ողբալով ձայնէր.-Պարտիզպա՛ն, ո՞ւր է իմ Որդին։

# Վարանիմ ի մեղաց

## Տաղ Աստուածածնայ






Յիմ նախկին վայելմանց
արժանապէս արտաքսեցայ, ո՛վ եղկելոյս,
ո՜հ, ո՛վ եղկելոյս.
ո՜հ, փուշ եւ տատասկ
բուսոյց երկիր ողորմելոյս,
ո՜հ, ողորմելոյս։

# Այսօր անդրանիկ

## Տաղ Համբարձման




մի - ա -
ծին
Որ - դին
յեր -
կի - նըս
սը - լա - նայր




Ելեալ ի բարձունս գերեաց զգերութիւն,
առեալ զաւար՝ բաշխեաց պարգեւս մարդկան:

Զերամս արդարոց ընտրեցելոց պարուց,
ածեալ ի յերկինս ի յօթեւանս Հօր:

# Այսօր տօն է սուրբ Ծննդեան

## Տաղ Ծննդեան



# Խնկի ծառին նման ես

## Տաղ Վերափոխման

*Հանդարտ, ջերմաշունչ եւ հիացմամբ*



# Խնկի ծառին նման ես

## Տարբերակ




Դու հաղանիւթ սրովբէ ես, հարսն ի յերկրէ յերկինս ես,
զԱստուած մարմնով ծնեալ ես, Աստուածածին, մեղա՛յ քեզ:

Դու յորդառատ աղբիւր ես, ծարաւելոց արբումն ես,
մեղաւորաց քաւիչ ես, Աստուածածին, մեղա՛յ քեզ:

Դու լուսեղէն տաճար ես, ոսկիապատ խորան ես,
դու մարգարիտ անգին ես, Աստուածածին, մեղա՛յ քեզ:

# ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԱՍԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

# Մակար Եկմալեան

## Հոգի Աստուծոյ




սո - րա ա - ղա -
չեմք ըղ - ձեզ Հան -
գո գՀո - գիս մեր նըն -
ջե - ցե - լոց:

# Մարմին Տէրունական



# Ո՞վ է որպէս Տէր

## Սրբասացութիւն




Աս -
տը
-
ւած
մեր.
խա
-
չե
-
ցաւ
վա


սրն
մեր,
Թա
դե -
ցաւ
եւ
յա -
րեաւ:

# Քրիստոս ի մէջ մեր



# Սուրբ - սուրբ


Յոյժ դանդաղ
Սուրբ,
սուրբ
Տէր զօ -
րու - թեանց, լի են եր -
կինք եւ յեր - կիր փա -
ռօք Քո. օրհ - նու - թիւն
ի բար - ձունս. օրհ -


նեալ, որ ե - կիր
եւ Գա - լոցդ ես
ան - ւամբ Տեառն. ով - սան -
նա ի բար - ձունս:

# Հայր մեր


Դանդաղ
Հայր մեր, որ յեր - կինս ես,
սուրբ ե - ղի - ցի' ա - նուն քո,
ե - կես - ցէ ար - քա - յու - թիւն քո,
ե - ղի - ցին կամք քո որ - պէս յեր -
կինս եւ յերկ - րի. զհաց մեր
հա - նա - պա - զորդ տուր մեզ այս -
օր. թող մեզ ըզ - պար - տիս մեր,




Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք
Յաւիտեանըս յաւիտենից: Ամէն:

# Միայն սուրբ


Դանդաղ
Մի - այն
սուրբ,
մի - այն
Տէր,
Յի - սուս Քրիս - տոս ի փառս
Աս - տու - ծոյ Հօր.
ա
մէն։

# Ամէն: Հայր սուրբ



# Տէր, ողորմեա


Դանդաղ
Տէր, ո - ղոր - մեա, Տէր,
ո - ղոր - մեա, Տէր, ո -
ղոր - մեա, Տէր, ո -
ղոր - մեա, Տէր, ո - ղոր - մեա,
Տէր, ո - ղոր - մեա:
Ա - րի, Աստ - ուած Հար -
ցըն մե - րոց, որ ա -


պա - ւէնդ ես նե -
դե - լոց. Հաս յօդ - նու - թիւն
ծա - ռա - յից Քոց,
Լեր օգ - նա - կան ազ - գիս Հա - յոց:

# Հրեշտակային
## Սրբասացութիւն




կար
-
գա
-
ւո
-
րու
-
Թեամբ
ա - ցեր
Աս
-
6
տը


ւած
զքո
սուրբ
զե - կե
ղե -
ցի.
Հա - վարք:

# Գովեա Երուսաղէմ

## Ճաշու շարական Զատկի եւ Յինանց




տեանս յա - փ - տե - նից ա - մէն: Յա - ր -
լոյն ի մե - ռե - լոց ա - լէ -
լու - իա, որ զաշ - խար - հըս լու -
սա - ւո - րեաց ա - լէ - լու - իա:

# Առաջի Քոյ, Տէր




ըեան Քո սուրբ ա -
ղա - չեմք ըզ - Քեզ
ո - ղոր - մեա
ա - ըեամբ քով փըր -
կեալ հօ տի։

# Օրհնեալ է Աստուած




լոյս. ա - լէ - լու - իա: Ճա - շա -
կե - ցէք եւ տե - սէք զի քաղցր
է Տէր. ա - լէ - լու - իա:
Օրհ - նե - ցէք ըզ - Տէր
յեր - կինս. ա - լէ - լու - իա:

## Ցորժամ

### Համօրէն ննջեցելոց



# Կոմիտաս

## Հայր մեր



# Սուրբ-սուրբ


Նուրբ հիացում
Սո՛ւրբ,
Լայն ու վեհ
սո՛ւրբ, Տէ՛ր զօ - րու - թեանց,
լի են եր - կինք եւ եր - կիր
փա - ռօք Քո: Օրհ-նու - թիւն ի բար - ձունս.
օրհ - նեալ, որ ե - կիր եւ գա - լոցդ ես ան -
Նուաղուն եւ ներքուստ
ւամբ Տեառն: Օվ - սան - նա ի բար-ձունս:

# Որ յանէից

## Շարական Հանգստեան




տոյն Սրր – բոյ այժմ եւ միշտ եւ յա –
ւի – տեանս յա – ւի – տե – նից: Ա – մէն:
Որ պը – սա – կիչդ ես
Քոց սրր – բոյ եւ ան – վախ – ճան
բար – եաց բաշ – խող. Թո – ղու – Թիւն
շնոր – հեա նրն – ջն – ցե – լոց Քոց
ծա – ռա – յից յոր – ժամ գաս
դա – տել զոր ա – նա – բատ
ձե – ռօք ստեղ – ծեր:

# Տէր, ողորմեա


Զերմեռանդն
Տէր, ո - ղոր - մեա, Տէր,
Ա - րի Աս - տուած, Հար -
ո - ղոր - մեա, Տէր, ո -
ցըն մե - րոց, որ ա -
ղոր - մեա: ո - ղոր - մեա:
պա - ւէնդ նե - ղե - լոց:
Հաս յօգ - նու - թիւն ծա -
ռա - յից Քոց, ան - օգ - նա -
կան ազ - գիս Հա - յոց:

# Օգտագործուած աղբիւրներ


*Շարակնոց*, Կ-Պոլիս, 1865։
*Ձայնագրեալ շարական Հոգեւոր երգոց*, Վաղարշապատ, 1875։
Ն. Թահմիզեան, *Ներսես Շնորհալին երգահան եւ երաժիշտ*, Երեւան, 1973։
Մ. Եկմալեան, *Երգեցողութիւնք ս. Պատարագի*, Անթիլիաս, 1974։
Կոմիտաս, *Երգեցողութիւնք ս. Պատարագի*, Անթիլիաս, 1974։
*Ոսկեփորիկ*, Երեւան, 1982։
*Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր*, Անթիլիաս, 1990։

# ՑԱՆԿ

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

### *ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ (Vդ.)*


Ցամենայն ժամ ..... 10
Բազում են Քոյ գթութիւնքդ ..... 11
Անկանիմ առաջի Քոյ ..... 13


### *ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ (Vդ.)*


Այսօր գոլով ի Բեթանիայ ..... 15
Այսօր կանգնեցաւ աւազան ..... 17
Արծաթսիրութեամբ մոլեալ ..... 19


### *ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ (Vդ.)*


Մագումն Հրաշալի ..... 21
Ով երջանիկ տէր սուրբ Գրիգոր ..... 23
Խորհուրդ մեծ եւ սքանչելի ..... 24
Ուրախացիր, սրբուհի ..... 26
Զանճառելի լուսոյ մայր ..... 28
Լոյս ի լուսոյ ..... 30
Անթառամ ծաղիկ ..... 32


### *ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ (Vդ.)*


Երանելի սուրբ առաքեալք ..... 34
Գովեա, Երուսաղէմ ..... 36


### *ԿՈՄԻՏԱՍ ԱՂՑԵՑԻ (VIIդ.)*


Անձինք նուիրեալք ..... 37


### *ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ (VIIդ.)*


Վասն մերոյ փրկութեան ..... 39
Առաքելոյ աղաւնոյ ..... 40

### *ՍԱՀԱԿ ՁՈՐԱՓՈՐԵՑԻ (VIIդ.)*

Էջ միածինն ի Հօրէ ........ 42
Որ նչանաւ ամենայաղթ ........ 43
Ուրախ լեր, սուրբ եկեղեցի ........ 45

### *ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ (VIIIդ.)*

Երգեցեք Տեառն ........ 47
Փառաւոր Հանդերձ կառօքն ........ 50

### *ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ (VIIIդ.)*

Զարմանալի է ինձ ........ 51

### *ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ (VIIIդ.)*

Նահատակ բարի ........ 56

### *ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՊԱՐԱՆՑԻ (Xդ.)*

Սրբութիւն սրբոց ........ 58

### *ՅԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ (XIդ.)*

Յանսկզբնական ծոցոյ Հօր ........ 62

### *ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ (XIդ.)*

Զօրս ըստ պատկերի քում ........ 64

### *ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ (XIդ.)*

Արիացեալք ........ 66

### *ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՎԱԳ (XI–XIIդդ.)*

Անսկիզբըն բանն ........ 69

### *ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ (XIIդ.)*

Նորահրաշ պսակաւոր ........ 71
Որ գերագոյն քան զընութիւնս ........ 73
Կանխեալ Յովնանու ........ 75
Որ կոչեցեր ըղՀեռացեալքս ........ 77
Այսօր տօնէ եկեղեցի ........ 78
ՕրՀնեցէք մանկունք ........ 79

### ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԵՑԻ (XII-XIIIդդ)

Խորհուրդ խորին ....... 82

### ՅԱԿՈԲ ԿԼԱՑԵՑԻ (XIIIդ)

Այսօր ցնծան ....... 84

### ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ (XIIIդ)

Որք զարդարեցին ....... 85
Սքանչելագործ Աստուած ....... 87

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ (XIIIդ)

Լերինք ամենայն ....... 89
Այսօր զուարճացեալ ....... 91

### ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ (XIV-XVդդ)

Արեւելք գերարփին ....... 93

## ՏԱՂԵՐ ԵՒ ՄԵՂԵԴԻՆԵՐ

### ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ (Xդ)

Հաւում, հաւում ....... 96
Հաւիկ ....... 97
Սայլն այն իջանէր ....... 101
Ահեղ ձայնս ....... 104
Գոհար վարդն ....... 105
Աչքն ծով ի ծով ....... 108

### ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ (XIIդ)

Ով զարմանալի ....... 112

### ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ (XIIդ)

Հիշեսցուք ի գիշերի ....... 113
Առաւօտ լուսոյ ....... 115
Աշխարհ ամենայն ....... 117
Նայեաց սիրով ....... 119

Յարեաւլից մինչ ի մուտս ....... 120
Տրտմահաղորդ ....... 122
Ուրախացան ազգք մարդկան ....... 123
Ստեղծող մանկանց ....... 124
Ի գերեզման ....... 126
Նոր ծաղիկ ....... 128

### ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ (XIIIդ)

Սիրտ իմ սասանի ....... 130

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ (XIIIդ)

Այսօր ձայնն հայրական ....... 131

### ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻ (XIV-XVդդ)

Ով պարտիզպան ....... 132

## ԱՆԱՆՈՒՆ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

Տիրամայրն հանդէպ Որդւոյն ....... 136
Ո՞ւր ես, մայր իմ ....... 138
Ի կոյս վիմէն ....... 141
Ի Բեթղեհէմ ....... 145
Քրիստոս փառաց Թագաւորն ....... 152
Ի գալստեան Տեառն ....... 154
Աւետիս քեզ, Մարիամ ....... 156
Դիտելով ....... 159
Յարեաւ Քրիստոս այսօր ....... 164
Յայն առաւօտին....... 168
Վարանիմ ի մեղաց....... 171
Այսօր անդրանիկ ....... 173
Այսօր տօն է սուրբ Ծննդեան ....... 176
Խնկի ծառին նման ես ....... 177

# ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԱՍԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## *ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆ (1856-1905)*


Հոգի Աստուծոյ ........ 180
Մարմին տէրունական ........ 182
Ո՞վ է որպէս Տէր ........ 183
Քրիստոս ի մէջ մեր ........ 186
Սուրբ, սուրբ ........ 187
Հայր մեր ........ 189
Միայն սուրբ ........ 191
Ամէն: Հայր սուրբ ........ 192
Տէր, ողորմեա ........ 193
Հրեշտակային ........ 195
Գովեա Երուսաղէմ ........ 198
Առաջի Քոյ, Տէր ........ 200
Օրհնեալ է Աստուած ........ 202
Յորժամ ........ 204


## *ԿՈՄԻՏԱՍ (1869-1935)*


Հայր մեր ........ 205
Սուրբ, սուրբ ........ 206
Որ յանէից ........ 207
Տէր, ողորմեա ........ 209

# ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

/Կազմող՝ Աննա Արեւշատեան/

«Անահիտ» Հրատարակչութիւն
/Տնօրէն՝ Արտակ Ոսկանեան/
Երեւան, Իսահակեան 28
Հեռ.՝ 52 62 03

Սրբագրիչ՝ Մարգարիտ Իսկանդարեան
Ձեւաւորումը եւ էջադրումը՝ Վիտալի Ասրիեւի

Չափը՝ 70x90: Տպագրութիւնը՝ օֆսեթ:
Ծաւալը՝ 13.5 տպ. մ.: Տպաքանակը՝ 500:

38132

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ЕРГОСКОНСЕРВАТОРИЙ

*«...Ի՞նչ խոր շեշտ հաւատքի, ի՞նչ հզօր թռիչք կրօնական զգացման, ի՞նչ բարձր վերացում աստուածային խոկմանց, ի՞նչ ճօխութիւն վեհ մտածմանց, պերճ պատկերներու եւ վսեմ բացատրութեանց, եւ ի՞նչ լեզուի անբացատրելի ներդաշնակութիւն՝ այդ երգերուն մէջ, որ դեռ այնչափ երիտասարդ են դարաւոր կեանքէ մը յետոյ. եւ այդ ամենուն հետ, այն ինչ անոյշ, անբացատրելի կերպով անոյշ երաժշտութիւն է, որ նիւթին ու բառին համեմատ, երբեմն կրկրում, մեղամաղձութեան արցունքներով կը թաւալի, երբեմն զուարթ, վերին հրճուանքի լայն յորդումով մը կը ժայթքի. Աստուծոյ զգացմամբ առլցուած հոգիին բոլոր ալքերն ամենէն խորին արտայայտութեամբ թարգմանելով: Ի՞նչ դիւցազներգութիւն, ի՞նչ ընդարձակ եւ ամբողջական դիւցազներգութիւն է այն, զոր աստուածային մարտիրոսին վերջին շաբաթէն ներշնչուելով, մաս առ մաս յօրիներ են մեր հայրապետները»:*

**ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ**